ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԾԱԹԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաթեր համայնք, հասցե՝ գ. Ծաթեր փ. 7, շենք 4
Էլ. հասցե՝ taster.lori@mta.gov.am ☏091 33 91 77

թիվ 00/27
§20¦ փետրվարի 2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Արթուր Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ

Կից Ձեզ եմ ուղարկում Ծաթեր համայնքի ավագանու N 8-Ա, 9-Ն, 10-Ա, 11-Ն որոշումները:

Առդիր 11/տասնմեկ/ թերթ:

Համայնքի ղեկավար՝ Բ. Ղալայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԾԱԹԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաթեր համայնք, հասցե՝ գ. Ծաթեր փ. 7, շենք 4
էլ. հասցե՝ tsater.lori@mta.gov.am ☎091 33 91 77

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2017 թվական N 8 -Ա

ԾԱԹԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝

Ծաթեր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաթեր համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 14-ի հերթական նիստի օրակարգը.

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱԹԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱԹԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱԹԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

	Համայնքի ավագանու անդամներ	*կողմ( )*	*դեմ(0)*	*ձեռնպահ(0)*
1	Այդինյան Ալիկ			
2	Գևորգյան Ցոլակ			
3	Գրիգորյան Քնարիկ			
4	Սարգսյան Նարինե			
5	Վիրաբյան Ռազմիկ			

Համայնքի ղեկավար՝ Բ. Ղալայան

2017թ փետրվարի 14
գ. Ծաթեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԾԱԹԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաթեր համայնք, հասցե՝ գ. Ծաթեր փ. 7, շենք 4
էլ. հասցե՝ tsater.lori@mta.gov.am ☎091 33 91 77

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2017 թվական N 9 –Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱԹԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ծաթեր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Ծաթեր համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել 2016 թվականի Ծաթեր համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

	Համայնքի ավագանու անդամներ	*կողմ( )*	*դեմ(0)*	*ձեռնպահ(0)*
1	Այդինյան Ալիկ			
2	Գևորգյան Ցոլակ			
3	Գրիգորյան Քնարիկ			
4	Սարգսյան Նարինե			
5	Վիրաբյան Ռազմիկ			

Համայնքի ղեկավար՝ Բ. Ղալայան

2017թ փետրվարի 14
գ. Ծաթեր

Հավելված N 1
Ծաթեր համայնքի ավագանու
2017թ. փետրվարի 14-ի № 09 -Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընդամենը եկամուտներ նախատեսվել է 11119.6հազ. դրամ, փաստացի կատարվել է 9298.8հազ. դրամ, որը կազմում է 83,6%:
Սեփական եկամուտները նախատեսվել է 5542.6հազ.դրամ,փաստացի կատարվել է 3721.8հազ. դրամ, որը կազմում է 67.1%:

-Հողի հարկը նախատեսվել է 2977.0հազ. դրամ, փաստացի կատարվել է 2363.9հազ. դրամ, որը կազմում է 79.4%:

- Գույքահարկը նախատեսվել է 629.4հազ. դրամ, փաստացի կատարվել է 498.7հազ. դրամ, որը կազմում է 79.2%:

-Վարձավճարները նախատեսվել է 1273.6հազ. դրամ, փաստացի կատարվել է 853.7հազ. դրամ, որը կազմում է 67.0%:

- Այլ եկամուտները նախատեսվել է 607.6հազ. դրամ, փաստացի մուտքեր չկան:

-Տեղական տուրքերը նախատեսվել է 40,0հազ. դրամ, փաստացի կատարվել է 5,0հազ. դրամ , որը կազմում է 12.5%:

Ծախսերի գծով նախատեսվել է 14280.6հազ. դրամ փաստացի կատարվել է 10635.4 հազ. դրամ, որը կազմում է 74.5%:

		Հազար դրամ
4 111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	7288.0
4 211	-Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	15.0
4 212	-Էներգետիկ ծառայություններ	208.0
4 213	-Կոմունալ ծառայություններ	20.0
4 214	-Կապի ծառայություններ	69.5
4 215	-Ապահովագրական ծախսեր	30.0
4 221	-Ներքին գործուղումներ	30.0
4 234	-Տեղեկատվական ծառայություններ	16.0
4 252	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	25.0
4 261	-Գրասենյակային նյութեր և հագուստ	40.0
4 264	-Տրանսպորտային նյութեր	400.0
4 269	-Հատուկ նպատակային այլ նյութեր	80.0
4729	Բարձրագույն կրթություն	195.0
4 729	-Ընտանիքի անդամներ և զավակներ	100.0
4 729	Սոցիալական հատուկ արտոնություններ	700.0
4 819	-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	40.0
5 112	- Շենքերի և շինությունների կառուցում	429.9
5 122	- Վարչական սարքավորումներ	949.0

Ծաթեր համայնքի ղեկավար Բ. Ղալայան

Հավելված N 2
Ծաթեր համայնքի ավագանու
2017 թվականի փետրվարի 14-ի N 09-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱԹԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Ծաթեր համայնքում 2016թվականի ընթացքում կատարվել են մի շարք բարեփոխումներ քառամյա ծրագրի համաձայն: Փողոցային լուսավորությունն ավելացվել է 30%-ով, տեղադրվել է 25 հատ լուսատու:

2016թվականին ավարտվեց շուրջ 2 տարի կառուցվող հանդիսությունների սրահի կառուցումը, որի վրա ծախսվեց շուրջ 22 միլիոն դրամ: Այն կառուցվեց Քաունթերփարթ ինթերնեյշնլ կազմակերպության և կառավարության հրատապ ծրագրերի համար տրվող գումարներով: Համայնքի կողմից կատրվեց 20% ներդրում:

2016 թվականի ընթացքում հանդիսությունների սրահի գույքը բարելավեց և ձեռք բերվեց 700 հազար դրամի նոր գույք՝ այդ թվում 10 հատ (1.8մ x 0.8մ) նոր սեղաններ և հարթ էկրանով հեռուստացույց:

Համայնքի ղեկավար՝ Բ. Ղալայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԾԱԹԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաթեր համայնք, գ. Ծաթեր փ.7, շենք 4
էլ. փոստ՝ tsater.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2017 թվականի N 10 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱԹԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Ծաթեր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ծաթեր համայնքի ավագանու <<Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին>> N 24-Ա որոշմամբ հաստատված համայնքի գույքագրման ցանկի մեջ համայնքի ղեկավարի կողմից կատարված փոփոխությունը (հիմնական միջոց հանդիսացող գույքի ցանկում ավելացվել է 10 (տաս) սեղան՝ 450000 (չորս հարյուր հիսուն հազար) դրամ արժողությամբ):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

	Համայնքի ավագանու անդամներ	*կողմ( )*	*դեմ(0)*	*ձեռնպահ(0)*
1	Այդինյան Ալիկ			
2	Գևորգյան Ցոլակ			
3	Գրիգորյան Քնարիկ			
4	Սարգսյան Նարինե			
5	Վիրաբյան Ռազմիկ			

Համայնքի ղեկավար՝ Բ. Ղալայան

2017թ. Փետրվարի 14
գ. Ծաթեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԾԱԹԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաթեր համայնք, գ. Ծաթեր փ.7, շենք 4
էլ. փոստ՝ tsater.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2017 թ. N 11 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱԹԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ) ենթակետով՝

Ծաթեր համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաթեր գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Ծաթեր համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաթեր գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 26 -Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

	Համայնքի ավագանու անդամներ	*կողմ( )*	*դեմ(0)*	*ձեռնպահ(0)*
1	Այդինյան Ալիկ			
2	Գևորգյան Ցոլակ			
3	Գրիգորյան Քնարիկ			
4	Սարգսյան Նարինե			
5	Վիրաբյան Ռազմիկ			

Համայնքի ղեկավար՝ Բ. Ղալայան

2017թ փետրվարի 14
գ. Ծաթեր

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաթեր համայնքի ավագանու
2017 թվականի փետրվարի 14 -ի թիվ 11 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱԹԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 (քսանհինգ հազար) դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 (քսանհինգ հազար) դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ,

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ,

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափայինչափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը

և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ,

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000 (մեկ հարյուր հազար) դրամ,

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախառևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 (երեսուն հազար) դրամ,

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախառքու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 25000 (քսանհինգ հազար) դրամ,

7) համայնքի վարչական տարածքում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝

յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 (վեց հազար) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000 (ութ հազար) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 (տասնմեկ հազար) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 (երեսուն հազար) դրամ,

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 (երեք հազար) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 (վեց հազար) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 (յոթ հազար) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 (տասներկու հազար) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 (քսանհինգ հազար) դրամ,

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 (երեք հարյուր հիսուն) դրամ, մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 3000 (երեք հազար) դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 25000 (քսանհինգ հազար) դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 100000 (հարյուր հազար) դրամ,

դ. խաղատների համար՝ 300000 (երեք հարյուր հազար) դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 130000 (հարյուր երեսուն հազար) դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ 60000 (վաթսուն հազար) դրամ,

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 (մեկ հազար) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 (երեք հազար) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 (վեց հազար) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000 (ինը հազար) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11000 (տասնմեկ հազար) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 (քսան հազար) դրամ,

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300 (երեք հարյուր) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 700 (յոթ հարյուր) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 (երեք հազար) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 (հինգ հազար) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 (ութ հազար) դրամ,

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 (մեկ հազար) դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750 (մեկ հազար յոթհարյուր հիսուն) դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 750 (յոթհարյուր հիսուն) դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում տեղադրելու թույլտվության համար՝ 190 (մեկ հարյուր իննսուն) դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ 75 (յոթանասունհինգ) դրամ,

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ,

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայությունն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 (հինգ հազար) դրամ,

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 250000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ,

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 համակերես ունեցող գերեզմանատների համար՝ 12500000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 համակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 համակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3500000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 (հինգ միլիոն) դրամ,

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 1000 (մեկ հազար) դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվության պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 2000 (երկու հազար) դրամ,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 3000 (երեք հազար) դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետվերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ,

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 2000 (երկու հազար) դրամ,

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ,

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել.

1. կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառումունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 25 դրամ,

2. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 (երեք հազար) դրամ,

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը՝ 200 (երկու հարյուր) դրամ,

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 200 (երկու հարյուր դրամ) փոխհատուցման վճար:

Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Պողոսյան